ՄԵՐ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԸ ՀԵՌԱՑԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԻՑ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքի երրորդ շաբաթը. քննարկվում են երկրի ներտնտեսական կյանքի զանազան հարցեր, իսկ սուր պրոբլեմներից մեկը՝ երկաթուղիների և ավտոմոբիլային ճանապարհների շրջափակման պատճառով Հայաստանում ու ԼՂԻՄ-ում ստեղծված դրությունը, ինչպես նաև այդ անօրինակ ոչ բարեկամական ձեռնարկման հետևանքները մինչև օրս չեն քննարկված, մեղավորները չեն հայտնաբերված, շրջափակմանը քաղաքական գնահատական չի տրված:

Դեպուտատների առանձին ելույթներում ու ռեպլիկներում տարակուսանք է արտահայտվում, թե ինչու են նստաշրջանը շեղում գնահատումներ տալուց, որոնք քաղաքակիրթ հասարակության տրամաբանությամբ ինքնաբերաբար թելադրվում են:

Հոկտեմբերի 10-ի նստաշրջանի առավոտյան լիագումար նիստը (ոչնչով բարդացումներ չէր կանխագուշակում. դեպուտատները քննարկում էին օրակարգով նախատեսված գնագոյացման հարցերը: Կարճատև ընդմիջումից հետո նստաշրջանը լսեց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Լ. Ի. Վորոնինի ինֆորմացիան ադրբեջանական երկաթուղով բեռնատար գնացքների երթևեկության վիճակի, ստացվող բեռների բնույթի մասին:

Լ. Ի. Վորոնինը նշեց, որ հարևան երկաթուղու մեղքով դեռևս ձգձգվում է վառելանյութով բեռնված շարժակազմերի առաքումը Հայաստանին ինչ-որ կերպ օգնություն ցույց տալու համար, որ Վրաստանի տարածքով Հայաստանն ստանում է պահանջվելիք բենզինի մոտավորապես մեկ երրորդը: Շտապ կարգով իրականացվում են մի շարք միջոցառումներ, որոնց շնորհիվ դարձյալ Վրաստանի երկաթգծով գնացքներ կառաքվեն ապահովելու Հայաստանի համար անհրաժեշտ քանակությամբ նավթաբեռների փոխադրումը:

Չնայած ադրբեջանական հանրապետության ղեկավարների հավաստիացումներին, երկաթուղային տրանսպորտի նորմալ աշխատանքը դեռ չի ապահովված:

Լ. Ի. Վորոնինն ընդունեց, որ առավել լուրջ իրադրություն է ստեղծվել ԼՂԻՄ-ում: Այստեղ արդեն ստացվում են պարենամթերքով բեռնված աննշան քանակությամբ վագոններ, սակայն վառելիքի բացակայության պատճառով բեռների առաքումը ձգձգվում է: Այդ պատճառով երեկ ԼՂԻՄ ժամանած 92 վագոններից միայն 16-ն է բեռնաթափվել:

ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալը այնուհետև ասաց, որ Ստեփանակերտից 101-րդ կիլոմետրի վրա, Եվլախում կանգնած է բենզին փոխադրող մի շարժակազմ, որն ուղարկելու հնարավորություն առայժմ չկա:

Երևի «հնարավորություն չկա» ասելով նկատի էր առնվում գնացքը բաց թողնելու ադրբեջանական կողմի դժկամությունը: Չնայած հարևան հանրապետության հավաստիացումներին, շրջափակումը ըստ էության լրիվ չի վերացվել: Այն դեռևս շարունակվում է: Դեպուտատներ Զ. Բալայանը, Լ. Հարությունյանը, Գ. Ենոքյանը, ուրիշ պառլամենտականներ առաջադրեցին հարցեր՝ պահանջելով կոնկրետ պատասխաններ տալ, թե կառավարությունը ինչ կերպ է մտածում կայունացնել դրությունը Ադրբեջանի երկաթուղիներում և ԼՂԻՄ-ում:

«Մենք քիչ պրոբլեմներ չունենք, և դրա հետ դժվար է վիճել, բայց մի՞թե կոոպերացիայի հարցերը հիմա ավելի կարևոր են, քան այն, ինչ տեղի է ունենում Հայաստանում,— բացականչեց դեպուտատ Հ. Իգիթյանը:— Ես ուզում եմ, որ այս դահլիճում բոլոր ներկա գտնվողները գիտակցեն, որ սպառնալիքի տակ է մի ամբողջ ժողովրդի ճակատագիրը»:

Ա. Ի. Լուկյանովը, պատասխանելով դեպուտատների հարցերին, հաղորդեց, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը մտադիր է քննարկել այդ բոլոր պրոբլեմները հանձնաժողովների, այդ թվում ազգամիջյան հարցերի հանձնաժողովի զեկուցումների հիման վրա և այդ կապակցությամբ ծագած օրենսդրական ասպեկտների ամբողջությամբ: Դա շատ երկար պրոցես կլինի, որը չպիտի դադարեցնի ընթացիկ կոնկրետ գործերի քննարկումը: Ուստի, ասաց նա, առաջարկություն կա՝

1. Ի գիտություն ընդունել այդ հարցի առթիվ կառավարության հաղորդումը:

2. Երկու հանրապետությունների պետական կառավարման մարմիններից մեկ անգամ էլ պահանջել ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները և Հայաստանի ու Ադրբեջանի ժողովրդական դեպուտատներին խրախուսել իրենց առավելագույն մասնակցությունը բերել ազգամիջյան լարվածությունը թուլացնելու միջոցառումներին:

3. ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին հանձնարարել շարունակել այն առաքելությունը, որ նա կատարում է:

Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատները, չհամաձայնելով այն բանին, որ շրջափակման պրոբլեմը նորից է հանվում քննարկումից, հեռացան նիստերի դահլիճից:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդին հասցեագրված հայտարարության մեջ, որը նրանք հանձնեցին նստաշրջանի նիստին նախագահող Լուկյանովին, ասվում է.

«Արդեն մեկուկես տարի է, ինչ ԼՂԻՄ-ը և երկրորդ ամիսն է, ինչ Հայաստանը շրջափակման մեջ են գտնվում: Ստեղծված իրավիճակը քննարկելու և փակուղուց ելք գտնելու մեր բոլոր փորձերը կտրականապես մերժվել են և ապարդյուն են անցել: Շրջափակման հարցի առթիվ այսօր ընդունված որոշումը փաստորեն ոչինչ չավելացրեց արդեն հայտնի որոշմանը, և Հայաստանի ու ԼՂԻՄ-ի դեպուտատները ստիպված էին հեռանալ դահլիճից:

Այս գործողությամբ մենք բնավ

էլ չէինք ուզում անհարգալից վերաբերմունք ցույց տալ Գերագույն խորհրդին: Մենք խորապես շնորհակալ ենք մեր դրժբախտությանը համամասնակից բոլոր դեպուտատներից:

Մենք դահլիճից հեռացանք ավելի շուտ անզորությունից, ծագած ճգնաժամը պառլամենտական մեթոդներով լուծելու անհնարինությունից:

Մենք դահլիճից հեռացանք, որպեսզի մեր կոլեգաների ուշադրությունը բևեռենք այն իրավիճակի վրա, որի մեջ հայտնվել են հայ դեպուտատները:

Մենք խնդրում ենք քաղաքական գնահատական տալ ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի շրջափակմանը, քանզի կարծում ենք, որ ապաշրջափակման նպատակով գործադրվող ջանքերը միայն այդ դեպքում արդասավոր կլինեն և կկանխեն շրջափակման կրկնությունը:

Մենք խնդրում ենք հանգիստ ու հարգալից մթնոլորտում քննարկել ԼՂԻՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի ապաշրջափակման աշխատանքների ընթացքը՝ շրջափակման վերացման ճիշտ, ՈՉ ԲՈՆԻ միջոցներ գտնելու համար:

Մենք խնդրում ենք հայտնել ԼՂԻՄ-ի պրոբլեմի քննարկման թեկուզև մոտավոր ժամկետները, ինչը, մեր կարծիքով, կկանգնեցնի ռեգիոնում բռնության հետագա էսկալացումը:

Խնդրում ենք մեր հայտարարությունը հրապարակել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում»:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի երեկոյան նիստում հայ պառլամենտականների հայտարարությունը հրապարակվեց:

— Մենք համաձայն չէինք այն որոշմանը, որն ընդունվեց Լ. Ի. Վորոնինի հաղորդումից անմիջապես հետո: Այն ոչինչ չէր նշանակում, և, բացի այդ էլ, շրջափակման համար պատասխանատվությունը Ադրբեջանի հետ պետք է կիսեր նաև Հայաստանը, ինչը ամենևին չի համապատասխանում իսկությանը,— Արմենպրեսի թղթակիցներին ասաց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, գրող Ս. Խանզադյանը:— Եվ, ի նշան այդ անհամաձայնության, մենք լրիվ կազմով դուրս եկանք նիստերի դահլիճից:

— Բայց երեկոյան նիստի ժամանակ դահլիճում, այնուամենայնիվ, կային Հայաստանից ընտրված ժողովրդական դեպուտատներ:

— Միանգամայն ճիշտ է: Հայաստանի և ԼՂԻՄ-ի դեպուտատական խմբերի խնդրանքով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատներ Ս. Գ. Հարությունյանը և Հ. Մ. Ոսկանյանը ներկա էին երեկոյան նիստին ի դեպս այն բանի, որ նստաշրջանում կարող էր սկսվել մեր դեպուտատական հայտարարության քննարկումը, առավել ևս, որ նրանք ամենաանմիջական կերպով մասնակցել էին այդ փաստաթղթի կազմմանը:

Հայաստանի և ԼՂԻՄ-ի դեպուտատների լրիվ կազմով հեռանալը դահլիճից բողոքի նշան էր ընդդեմ ոչինչ չնշանակող որոշման ընդունման:

Լ. ԱԶՐՈՅԱՆ
Ջ. ԲԱԼԱԳՅՈԶՅԱՆ
(Արմենպրեսի հատուկ թղթակիցներ)